

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 -Ի ԹԻՎ 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

«__» _____2023 թվականի N__ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 -Ի ԹԻՎ
10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային
համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի
1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին»
օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Վանաձոր համայնքի
ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի
ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի
Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2023 թվականի
բյուջեն հաստատելու մասին» N 10-Ն որոշման մեջ կատարել հետևյալ
փոփոխությունները.
- որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «4 993 315 200 (չորս միլիարդ
ինը հարյուր ինսուներեք միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար երկու
հարյուր)» բառերը փոխարինել «4 994 840 400 (չորս միլիարդ ինը
հարյուր ինսուներեք միլիոն ութ հարյուր քառասուն հազար չորս
հարյուր)» բառերով:
- որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «5 918 315 200 (հինգ միլիարդ
ինը հարյուր տասնույթ միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար երկու
հարյուր)» բառերը փոխարինել «6 169 637 500 (վեց միլիարդ հարյուր
վաթսուհինը միլիոն վեց հարյուր երեսուկյոթ հազար հինգ հարյուր)»
բառերով:
- որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «925 000 000 (ինը հարյուր
քսանհինգ միլիոն)» բառերը փոխարինել «1 174 797 100 (մեկ միլիարդ
հարյուր յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր ինսուկյոթ հազար մեկ
հարյուր)» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 10-Ն որոշման հավելվածի եկամտային և ծախսային մասերում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հավելվածների.

1) հաստատել Վանաձոր համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման արդյունքում առաջացած պարտքերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2) որոշման հավելվածի 1-ին, 4-րդ և 5-րդ հատվածներում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3) որոշման հավելվածի 2-րդ 3-րդ և 6-րդ հատվածներում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը: